

Բարեգործական հերթական ծրագիրը՝ Արագածավանում

12.11.2014



Նոյեմբերի 11-ին Արագածոտնի մարզպետարանի, Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF), Ուան Արմենիա կազմակերպության (ONEArmenia) համագործակցության արդյունքում տեղի ունեցավ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի թիվ 2 դպրոցի Նորովի կառուցված դպրոցական ճաշարանի եւ ատամների մաքրման կայանի, ինչպես նաև հիմնաստորոգված հանդիսությունների դահլիճի բացման պաշտոնական արարողությունը:

Եռակողմ գործընկերության շնորհիվ Նորովի կառուցվեց դպրոցական ճաշարանն ու ատամների մաքրման կայանը, իսկ Հիմնադրամի ամառային երեկույթի ընթացքում հանգանակած

Նվիրատվությունների շնորհիվ հիմնաստորոգվեց նաև դպրոցի հանդիսությունների սրահը:

Արագածոտնի մարզպետարանի ջանքերով հաջողվեց ապահովել հանդիսությունների սրահի կահավորումը: Արդյունքում ուսումնական տարվա սկզբից ամեն օր տաք եւ առողջ մտունդ է մատուցվում տարրական դպրոցի երեխաներին, Դպրոցն այժմ ունի նաև մեծ ու լուսավոր հանդիսությունների սրահ, որը նպաստելու է հայ բազմատաղանդ մանուկների բացահայտմանը, զարգացմանն ու առաջխաղացմանը:

Արագածավանի թիվ 2 դպրոցի առաջիկա բարեփոխումների կտրվածքով նախատեսվում է նաև դպրոցն ընդգրկել «Դպրոցները՝ հանուն առողջության» ՀՀ պետական ծրագրում եւ այն անդամագրել «Առողջությունը խրախուսող դպրոցների եվրոպական ցանց»-ին:

Ողջունելով ներկաներին փոխմարզպետ Նունե Մովսիսյանը փոխանցեց մարզպետ Սարգիս Սասիակյանի շնորհավորանքը նախագծի իրականացման կապակցությամբ եւ այն կարելորեց իբրեւ պշակերտների առողջ ապրելակերպի ու ճիշտ սննդակարգին ուղղորդող գրավական: Նշվեց, որ COAF-ի հետ իրենց համագործակցությունը լավ ավանդույթներ ունի, եւ առաջիկայում համատեղ իրականացված ծրագրերին ավելանալու են նորերը:

Իր ելույթում հիմնադրամի գործադիր տնօրեն Անուշ Եղիզարյանն ասաց. «Այսօր մենք տոնում ենք COAF-ի մի քանի ենթածրագրերի հավաքական ձեռքբերումները եւ ուրախ ենք, որ մեր կողքին են մեր գործընկերները՝ Ուան Արմենիան եւ Արագածոտնի մարզպետարանը, որոնց շնորհիվ հիմնադրամի այս մեծ նախաձեռնությունը ավելի ամբողջական դարձավ,»: